



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/65-2023

ՀՀ ՓՈՒՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉՍՏՐՅԱՆԻ ՄՈՏ ԿԱՅԱՅԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՀՄԱՆ
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90+191 ՀԱՏՎԱԾ)
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍՄԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

24 մարտի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Փոխվարչապետ (խորհրդի նախագահ)

S. Խաչատրյան

ՄԱՍՆԱԿՅՈՒՄ ԷԻՆ (խորհրդի անդամներ)

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար

Գ. Սանոսյան

Կադաստրի կոմիտեի ղեկավար

Ս. Թովմասյան

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարի տեղակալ

Ք. Ղալեյյան

Արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հարությունյան

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Տ. Գաբրիելյան

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական
«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի
իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տե-
ղակալ, քաղաքային կայուն զարգացման ներդրումային
ծրագրի ղեկավար

Ա. Սարգսյան

Ն. Մարտիրոսյան

Հրավիրված՝

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի
ղեկավար

Ա. Ադիլխանյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի
գործադիր տնօրենի տեղակալ

Ն. Զուլալյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի
Հայաստանի ճանապարհային անվտանգության
բարելավման ծրագրի ղեկավար

Կ. Բադալյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային 1-ին հարց՝ Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային
ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2018 թ.
ապրիլի 3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/01
«Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման Մ6 միջպետական ճանապարհի կմ38+450-

կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և նախագծերի վերանայում» պայմանագրի փոփոխման կարգադրագիր թիվ 9-ի վերաբերյալ

1. Զեկույց ներկայացրեց՝

1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Նարեկ Զուլայանը՝ ներկայացնելով պայմանագրի ժամկետը երկարաձգելուն ուղղված աշխատանքները:

2. Որոշվեց՝ հավանություն տալ օրակարգային 1-ին հարցին:

Օրակարգային 2-րդ հարց՝ Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Տրանշ 3՝ Լանջիկ - Գյումրի (կմ 90+200 - կմ 117+670) N T3-QCBS-01 խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի վերաբերյալ

1. Զեկույց ներկայացրեց՝

1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Նարեկ Զուլայանը՝ ներկայացնելով խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի մասին մանրամասները:

2. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝

1.1. Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի առաջարկությամբ խմբագրել պայմանագրի փաթեթը և հանել Հոռոմի գազայցակայանի նկարագրությանը վերաբերող հատվածը,

1.2. Հանձնարարել ծրագրի տեխնիկական վերահսկող ինժեներին շինարարության ընթացքում կատարման ենթակա աշխատանքների ուշացումների վերաբերյալ տեղեկատվությունը ներառել պատվիրատուին տրվող ամսական հաշվետվություններում:

3. Որոշվեց՝ հավանություն տալ օրակարգային 2-րդ հարցին:

Օրակարգային 3-րդ հարց՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագիր-Տրանշ 3՝ Թալին-Լանջիկ հատվածի No T3-CW-01 պայմանագրի N 4 փոփոխման հրահանգի վերաբերյալ

1. Զեկույց ներկայացրեց՝

1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Նարեկ Զուլայանը՝ ներկայացնելով ճանապարհի ծրագծով համայնքների բնակչությանը մուտքեր ապահովելուն ուղղված աշխատանքները:

2. Որոշվեց՝ հավանություն տալ օրակարգային 3-րդ հարցին:

Օրակարգային 4-րդ հարց՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագիր - Տրանշ 3՝ Թալին-Լանջիկ հատվածի No T3-CW-01 պայմանագրի N 8 փոփոխման հրահանգի վերաբերյալ:

1. Ձեկույց ներկայացրեց՝

1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Նարեկ Զուլայանը՝ ներկայացնելով Թալին-Լանջիկ ճանապարհահատվածին լուսավորության համակարգի տեղադրմանն ուղղված աշխատանքները:

2. Որոշվեց՝ հավանություն տալ օրակարգային 4-րդ հարցին:

Օրակարգային 5-րդ հարց՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 4, Սիսիան-Քաջարան հատվածի կառուցման նպատակով տարաբնակեցման ծրագրի իրականացման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի վերաբերյալ:

1. Ձեկույց ներկայացրեց՝

1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Նարեկ Զուլայանը՝ ներկայացնելով տարաբնակեցման ծրագրի իրականացման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի անցկացման անհրաժեշտությունը:

2. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ մասնակիցների համար տեխնիկական բնութագրում ներառել հողամասերի՝ մասնավոր, համայնքային կամ պետական սեփականության հանդիսանալու տվյալները:

3. Որոշվեց՝ հավանություն տալ օրակարգային 5-րդ հարցին:

Օրակարգային 6-րդ հարց՝ Քաջարանի շուրջ 7 կմ երկարությամբ թունելի կառուցման և մոտեցող ճանապարհների (շուրջ 4 կմ ընդհանուր երկարությամբ) վերակառուցման ներդրումային ծրագրի իրականացման վերաբերյալ:

1. Ձեկույց ներկայացրեց՝

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանը՝ ներկայացնելով Քաջարանի շուրջ 7 կմ երկարությամբ թունելի կառուցման և մոտեցող ճանապարհների (շուրջ 4 կմ ընդհանուր երկարությամբ) վերակառուցման ներդրումային ծրագրի իրականացմանն ուղղված հերթական քայլերը:

2. Ներկայացվեց հետևյալ էական դիտարկումը՝

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանն առաջարկեց Ֆինանսների նախարարության ուշադրությունը հրավիրել միջազգային ֆինանսավորող կազմակերպությունների կողմից կիրառվող գնման առանձնահատկություններին և մրցույթներին մասնակցության հնարավոր սահմանափակումներին, համաձայն որոնց օրինակ՝ իրանական ընկերությունների մասնակցությունը կարող է սահմանափակվել և խնդրահարույց լինել:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանին՝ Ֆինանսների նախարարության և ֆինանսավորող կազմակերպությունների հետ քննարկել միջազգային վարկային և (կամ) դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակներում կնքվող պայմանագրերում աշխատանքի և (կամ) ծառայության արժեքը ՀՀ դրամով նախատեսելու հնարավորության հարցը և արդյունքների մասին զեկուցել Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանին:

4. Որոշվեց՝ հավանություն տալ օրակարգային 6-րդ հարցին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ